

Մատղաշի բացոյյա պահվացք, ԽԵԿ-երի պահվածքը եռապատ շինություններում

Բացոյյա պահվածքը հորթերի համար նախատեսված անհատական վանդակներում և եռապատ շինություններում համարվում է պահվածքի սատը մեթոդ, քանի որ կենդանիները մշտապես պահվում են անկապ վիճակում բացոյյա պայմաններում:

Այս մեթոդն իր մեջ ներառում է հետևյալ էլեմենտները.

1. Յուրաքանչյուր հորթի մեկուսացումը ծնվելուց հետո անհատական վանդակներում ինֆեկցիաների տարբեր աղբյուրներից (անհատական վանդակներում հորթերը լինում են մեկուսացած մեկը մյուսից, որի շնորհիվ խիստ նվազում է շփման ճանապարհով խիվանդությունների փոխանցումը):
2. Անհատական վանդակների տեղադրումը բացոյյա տարածքներում (վանդակները լինելով տեղադրված բաց երկնքի տակ, արևի ճառագայթներն ընկնում են նրա վրա, և հորթերը, ինչպես նաև մեծահասակ ԽԵԿ-երը եռապատ շինություններում, մշտապես գտնվում են արևի բարերար ազդեցության տակ, չեն շնչում ամոնիակ և այլ թունավոր գազեր, որոնք առկա են գոմերում պահելու դեպքում):
Վանդակները պետք է գտնվեն իրարից 50սմ հեռավորության վրա և տեղադրված լինեն քամու ուղղությանը հակառակ:
3. Հորթերի և ԽԵԿ-երի ազատ շարժն անհատական վանդակներում և եռապատ շինություններում (ազատ շարժն ապահովելու համար պետք է վանդակները և եռապատ շինությունը սարքել ճիշտ չափսերով):
4. Անհրաժեշտ հիգիենա (վանդակներում և եռապատում հատակին պետք է պարտադիր փովի ցամքար ծղոտի կամ փայտի թեփի տեսքով և փոխվի ամեն օր: Ցամքարի հաստությունը պետք է լինի այնքան, որ կենդանիների կճղակները ծածկվեն):

Հորթերի դիմադրողականությունը բացոյյա պայմաններում և չափահաս ԽԵԿ-երինը եռապատ շինություններում պահելու դեպքում բարձրանում է 9-11%-ով:

Բացոյյա պահվածքի առավելությունները.

- Շինաշխատանքների համար քիչ գումար է ծախսվում
- Հիվանդությունների գրանցման դեպքերը նվազում են
- Յուրաքանչյուր հորթ սնվում է առանձին (սրա շնորհիվ հորթերը սնվում են հավասարաչափ, և տեսանելի ու կառավարելի է կենդանու սնվելու չափը)
- Հորթերն աճում են ինտենսիվ (օրական քաշաճն ավելանում է 10%-ով)

Բացոյյա պահվածքի թերությունները.

- Պետք է ավելացնել կերի քանակը 5%-ով` մարմնի նորմալ ջերմաստիճանի պահպանման համար